Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2015 թվականի N -Ա

ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 589-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը՝ Կարուսել Իսթաբլիշմենտ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն)՝ սեփականության իրավունքով պատկանող ք.Երևան, Վազգեն Սարգսյան 1 հասցեում գտնվող ---------- ՀՀ դրամ գնահատված արժեքով սույն որոշման Հավելված 1-ում նշված անշարժ գույքը (այսուհետ՝ Անշարժ գույք 1) փոխանակել ՀՀ սեփականությունը հանդիսացող ք.Երևան, Սարգսյան 3 հասցեում գտնվող ---------- ՀՀ դրամ գնահատված արժեքով սույն որոշման Հավելված 2-ում նշված անշարժ գույքի (այսուհետ՝ Անշարժ գույք 2) հետ:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով փոխանակվող գույքերը համարվում են համարժեք և որևէ դրամական կամ այլ ձևով փոխհատուցման պարտավորություն չեն առաջացնում կողմերի մոտ:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել փոխանակումից բխող հարկային վճարումները ՀՀ կողմից՝ հիմք ընդունելով փոխանակվող գույքի կադաստրային արժեքները:

4. Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Ընկերության հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոխանակման մասին

պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ փոխանակման հետ կապված չափագրումների, նոր հատակագծերի նախագծման և պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են ՀՀ կողմից:

3. Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագրի կնքումից հետո եռամսյա ժամկետում ապահովել Անշարժ գույք 1-ի նկատմամբ ՀՀ սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ ՀՀ պետական բյուջեից այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Հ. Աբրահամյան**